

**ԿԱՐԾԻՔ**

**ՄԱՆԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՂԱԲԵԿՅԱՆԻ**

**«ԲԱԶՄԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ-ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ**

**ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**(ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԹՈՔ-ՇՈՈՒՆԵՐԻ  
ՀԻՄԱՆ ՎՐԱ) »**

**ԹԵՄԱՅՈՎ թ 02.07. «ՌՈՄԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼԵՁՈՒՆԵՐ»**

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՅՄԱՆ ՀԱՄԱՐ**

**ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Արդի մեդիա դիսկուրսում, հատկապես հասարակական-քաղաքական հեռուստատեսային թոք-շոուներում, բազմախոս հաղորդակցումը կարևոր դեր է խաղում հասարակական կարծիքի ձևավորման և քաղաքական դիրքորոշումների արտահայտման գործընթացում: Բազմամասնակից հաղորդակցման ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու խոսքային ռազմավարությունները, փոխազդեցության կառուցակարգերը և հնչյունաբանական միջոցների դերը քաղաքական դիսկուրսում: Հենց դրա համար էլ բազմախոս հաղորդակցման հնչյունական և լեզվագործաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը ներկայումս ունի գիտական ակնհայտ արդիականություն:

Մանան Աղաբեկյանի «Բազմախոսության հնչյունական-գործաբանական առանձնահատկությունները (բրիտանական քաղաքական-հասարակական թոք-շոունների հիման վրա)» թեմայով հետազոտության նպատակն է վերհանել բազմախոսության լեզվական և արտալեզվական հատկանիշները, որոնց կիրառմամբ խոսողը քաղաքական-հասարակական թոք-շոունների հիման վրա իրագործում է հաղորդակցական մի շարք ռազմավարություններ:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է բազմախոսական հաղորդակցման առանձնահատկությունների, մասնավորապես հնչերանգային և գործաբանական միջոցների փոխհարաբերության նկատմամբ աճող հետաքրքրությամբ և խմբային հաղորդակցման հնչերանգային առանձնահատկությունների հետազոտությունների սակավաթիվ լինելով, ինչպես նաև քաղաքական-հասարակական թոք-շոուների նկատմամբ ժամանակակից հասարակության աճող հետաքրքրությամբ:

Աշխատանքի գիտական նորույթն ապահովվում է խմբային հաղորդակցման հնչերանգային առանձնահատկությունների համակարգային նկարագրությամբ: Ուսումնասիրության մեջ տրվել է հաղորդակցվողների՝ քաղաքական-վերլուծական բնույթի խոսույթում համագործակցային և կոնֆլիկտային ռազմավարությունների հնչերանգային նկարագիրը բազմախոսական բանավոր հաղորդակցման ժամանակ: Աշխատանքում նաև փորձ է արվել ուսումնասիրության ճշգրտության համար համադրել լսողական և էլեկտրաակուստիկ վերլուծությունների տվյալները:

Աշխատանքը տեսական և գործնական կարևոր արժեք ունի, այն կխթանի լեզվաբանական ժամանակակից միջգիտակարգերի տեսական հիմքերի ընդլայնումը և կզարգացնի անհատների հաղորդակցական մեղմացման գործածության իրազեկությունը բազմազան համատեքստերում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, որտեղ խոսվում է ուսումնասիրության առարկայի, նորույթի, արդիականության, գիտական ու տեսական արժեքների մասին, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Առաջին գլխում ներկայացված են քաղաքական բազմախոսությունների առանձնահատկությունները: Տրվում է հասարակական-քաղաքական բազմախոսական թոք-շոուների

նկարագիրը, ինչպես նաև առաջարկվում է բազմախոսությունների մասնակիցների և նրանց դերերի դասակարգում, քաղաքական խոսույթին հատուկ կոնֆլիկտային և համագործակցային ռազմավարությունները:

Երկրորդ գլխում անդրադարձ է կատարվում ուսումնասիրության նյութին, վերլուծության մեթոդներին և խնդիրներին, նկարագրվում են հնչյունագործաբանական վերլուծության փուլերը, քննարկվում են հնչյունաբանության ուսումնասիրության գործաբանական մոտեցումները, նաև ներկայացվում է գործաբանական վերլուծության մոտեցումը՝ դասակարգելով կոնֆլիկտային, համագործակցային ու չեզոք ռազմավարությունները:

Գլուխ 3-ում քննարկվում են հասարակական-քաղաքական բազմախոսությունների մասնակիցների կիրառած կոնֆլիկտային և համագործակցային ռազմավարությունները, դրանց հնչերանգային պատկերը՝ ստեղծված լսողական և էլեկտրաակուստիկ վերլուծությունների արդյունքում, ներկայացվում է հնչերանգային միավորների և հաղորդակցական մեղմացման տեսակների գործածության քանակական պատկերը:

Ատենախոսության հիմնական դրույթները սեղմ և հստակ ներկայացված են «Եզրակացություն» բաժնում:

Այսպիսով, կարելի է փաստել, որ Մանան Աղաբեկյանը իրականացրել է իր առջև դրված բոլոր խնդիրները և նշանակալից արդյունքների հասել:

Ըստ արժանվույն գնահատելով ատենախոսի կողմից կատարված աշխատանքը՝ այդուհանդերձ կցանկանայինք ստանալ որոշ պարզաբանումներ հետևյալ հարցերի վերաբերյալ:

- Աշխատանքի առաջին գլխում քննարկելով քաղաքական խոսույթին հատուկ գործալեզվաբանական ռազմավարությունները՝ ատենախոսը հղում է անում արտասահմանյան, այդ թվում՝ նաև ռուս մի շարք հեղինակների և լեզվաբանների: Կարծում ենք՝ աշխատանքում

քննարկման այս մասը ավելի համապարփակ կլիներ, եթե այստեղ ներառվեին նաև հայ լեզվաբանների կողմից դիսկուրսի վերաբերյալ առաջադրված մոտեցումներ և տեսակետներ:


- Աշխատանքի երկրորդ գլխի 6-րդ ենթագլխում նշվում է, որ անգլերենի 20 մասնագետների կամ, ինչպես հետազոտության մեջ է նշված, աուդիտորների (էջ 77) առջև դրված է եղել խնդիր տրված ցանկից ընտրելու կոնֆլիկտային և համագործակցային ռազմավարություններն ու մարտավարությունները: Կարծում ենք՝ աշխատանքի վերլուծական հիմքը ավելի կշահեր, եթե այդ արդյունքները զետեղվեին հավելվածում: Այդ առումով կցանկանայինք նաև իմանալ, թե ինչ չափանիշների հիման վրա է կատարվել տվյալ մասնագետների ընտրությունը, և արդյոք հարցման արդյունքներում առկա են մասնագետների կողմից տրված իրարամերժ կարծիքներ կոնֆլիկտային և համագործակցային ռազմավարությունների վերաբերյալ:
- Հետազոտության վերլուծության քանակական բաղադրիչը ավելի կուռ և ընդգրկուն կլիներ, եթե աշխատանքի վերջին գլխում մեկ ընդհանուր աղյուսակով ներկայացվեին վիճակագրական լրացուցիչ տվյալներ, որոնք կընդհանրացնեին հետազոտվող բազմախոսությունների շրջանակում կիրառվող հնչյունական և գործալեզվաբանական միջոցների համահարաբերակցման օրինաչափությունները համագործակցային, չեզոք և կոնֆլիկտային ռազմավարությունների համատեքստում:
- Հետազոտության տարբեր հատվածներում (էջ 93, 103, 108, 162 և այլն) զուգահեռաբար կիրառվում են «ռազմավարություն», «մարտավարություն» և «ռազմավարույթ» եզրույթները: Կցանկանայինք իմանալ՝ արդյոք ատենախոսը տարբերակում է վերջիններս իմաստային առումով, թե օգտագործում է դրանք փոխարինաբար:

- Աշխատանքի տարբեր հատվածներում (էջ 65, 66, 70, 128, 129, 130, 133, 167) առկա են լեզվական որոշ անճշտություններ, և տեխնիկական բնույթի վրիպումներ:

Վերը նշված նկատառումներն ու դիտողությունները, սակայն, ամենևին չեն ստվերում ատենախոսի կատարած ուսումնասիրության արժանիքները: Ընդհանուր բովանդակությամբ, աշխատանքի վերլուծական ու մեկնողական մասի հագեցվածությամբ, հետազոտության արդյունքների հավաստիությամբ Մանան Պայքարի Աղաբեկյանի ատենախոսությունը լիովին բավարարում է թեկնածուական աշխատանքին ներկայացվող պահանջները:

Սեղմագիրը և ներկայացված տպագիր հոդվածները ևս համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ կարծում ենք, որ սույն ատենախոսությունը համապատասխանում է գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին՝ Ժ.02.07 «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ, իսկ ատենախոս Մանան Աղաբեկյանը արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝  Լուսինե Հարությունյան  
(ՀՊՏՀ լեզուների ամբիոնի վարիչ, բանասիրական  
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր)

Հաստատում եմ բ. գ. դ., պրոֆեսոր Լ. Հարությունյանի  
ստորագրությունը:

ՀՊՏՀ գիտական քարտուղար՝





Դարբինյան